ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1951 *Общественные науки*

Ե. Դլոճադարյան

ԴՎԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Կառուցման ժամանակը, ոճը եվ կրած փոփոխությունները

Դվինում կատարվող սիստեմատիկ հնագիտական պեղումները բաց են արել մի չարք ճարտարապետական խոշոր կառուցվածքների ավերակներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի մեր ճարտարապետության պատմության համար։

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում գիտությանն արդեն հայտնի Կաթողիկե եկեղեցին, որի կրած մի չարք փոփոխությունների հետքերը և սկզբնական տեսքի մնացորդները ի հայտ եկան 1946—1951 թվականների ընթացքում կատարված պեղումների ժամանակ։

Կաթողիկե եկեղեցու օրինակի վրա կարելի է պարզել հայկական նոսաթեվ բազիլիկ տաճարների սկզբնական տեսքը և հետագայում կրած փոփոխությունների բնույթը, զանազան հավելվածքների (արտաքին սյունասրահ, ավանդատներ, կողմնային աբսիդներ) առաջացման ժամանակը և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնք օժանդակում են միջնադարյան Հայաստանի ճարտարապետության զարգացման հարցերի պարզաբանմանը։ Մինչև այժմ Դվինում ի հայտ եկած ճարտարապետական կառուցվածքների մեջ հնագույնը Կաթողիկե մայր եկեղեցին է, որ սկզբնապես կառուցված է եղել գնոնս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելուց հետո վերակառուցվել։

Տաճարի հիմնապատերի ներքին երեսը բաց է արել Խաչիկ վարդապետ Դաղյանը 1907 թվին, այնուհետև անցման որոշ աշխատանքներ կատարվել են 1938—39 թվերին, Պատմության ինստիտուտի արշավախմբի կողմից, իսկ տաճարի ավերակները հիմնովին բաց են արվել 1946—1951 թվականներին՝ Պետական Պատմական Թանգարանի կողմից կատարված պեղումների ընթացքում։

Դվինի Կաթողիկեն մինչև այժմ գիտական գրականությանը հայտնի է իր վերջին տեսքով, երբ նա Թալինի մեծ տաճարի ձևն ուներ իր դուրս շեշտված երկու կողմնային աբսիդներով և չորս հաստահեղույս պիլոնների վրա նստած հսկայական գմբեթով,[1] սակայն մասերի համաչափության միանգամայն տարբեր հարաբերությամբ։

Թալինի տաճարի արևմտյան մասը համեմատաբար ավելի երկարավուն է, քան թե կենտրոնականն ու արևելյանը, իսկ Դվինում այդ մասերը դասավորված են համաչափորեն՝ արևմուտքից դեպի արևելք։ Թալինում՝ գմբեթը, ինչպես նաև կողմնային աբսիդները տաճարի համեմատաբար արևելյան կողմումն են տեղադրված, որի շնորհիվ արևելյան կողմի կամարները ավելի փոքր թռիչք ունեն, քան արևմտյան կամարները։ Դվինում արևմուտքից դեպի արևելք ձգվող բոլոր կամարները էլ միմյանց հավասար են, հետևապես և գմբեթը, ինչպես նաև կողմնային աբսիդները, գտնվում են եկեղեցական դահլիճի կենտրոնում և ոչ թե նրա արևելյան կողմում։ Այսպիսով, տեսնում ենք, որ թեև այդ երկու տաճարները միմյանց նման են իրենց կազմության արտաքին պատկերով, բայց մասերի հարաբերությամբ զգալի կերպով տարբերվում են միմյանցից։

Կարծում ենք, որ այդ հարաբերություններն առաջ են եկել ո՛չ թե կառուցողների ձաչակից, այլ մեծ մասամբ անհրաժեշտությունից։ Եթե Թալինում եկեղեցին չինել են այնպես, ինչպես կամեցել են, ապա Դվինում կառուցողները այդ հնարավորությունից զուրկ են եղել, որովհետև այնտեղ եկեղեցին նախապես գոյություն ուներ և այն նոսաթեվ բազիլիկ տաճար էր։ Այդ տաճարը ձևափոխման ենթարկելով, վերակառուցողները աշխատել են հնից պահպա-

---

[1] Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատոր II, 1942 թ. Երևան, էջ 243 (Կաթողիկեն կառուցված է համարում 372 թվից առաջ), Н. Токарский, Архитектура древней Армении. Երևան, 1946 թ., էջ 107 (կառուցված է համարում 7-րդ դարում)։ Վ. Հարությունյան, Դվինի 3—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները. Երևան, 1950 թ. էջ 103. (Կառուցված է համարում 608 թվին)։

նել ինչ որ կարելի է, որի հետևանքով էլ նրա չափերը չեն համեմատվում Թալինում ազատորեն չինված նույնանման տաճարի չափերին։

1948 թվականին հայտնագործված ավելի հին արսիդի ավերակները՝ որոնք գտնվում էին արդեն հայտնի աբսիդից մոտ 9 մետր դեպի արևելք, ցույց տվին, որ իրոք այս տաճարի վերակառուցման ժամանակ չեն պահպանվել ոչ միայն տաճարի նախկին չափերը, այլև տիպը, իսկ 1949 և 1951 թվականներին կատարված մանրազնին պեղումները պարզեցին, որ



Կաթողիկեի հատակագիծը ըստ 1951 թվի պեղումների

Կաթողիկե եկեղեցու սկզբնական շենքը երկու անգամ ենթարկվել է խոշոր ձևափոխությունների և միայն վերջին ձևափոխության ժամանակ է, որ նա ստացել է գմբեթ և կողմնային աբսիդներ։ Սկզբնական շրջանում տաճարը եղել է ահռելի մեծության նոսթեվ բազիլիկ մի-նությունը, առանց արևելյան ավանդատների ու արտաքին սյունասրահի։ Այդ վիճակում Դվինի Կաթողիկեն մեծ նմանություն է ունեցել Քասաղի հնագույն բազիլիկ տաճարին, բայց, իհարկե, եղել է նրանից շատ ավելի մեծ։ Քասաղի եկեղեցին ունի արտաքուստ 23,4 մետր

երկարություն, չհաշված արսիդը, Դվինի Կաթողիկեն՝ 44,4 մետր, ըստ որում Դվինի տաճարի ընդհանուր երկարությունը արսիդի հետ միասին եղել է 52,4 մետր, որ մեզ ծանոթ հնագույն եկեղեցիներից ամենամեծն է։ Քասաղի բազիլիկ տաճարը և Դվինի Կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունը միմյանց նման են ոչ միայն ընդհանուր գծերով, այլև մի շարք մանրամասնություններով, որոնց հիման վրա կարելի է հաստատել այդ երկու, չափերով միմյանցից տարբեր, եկեղեցիների միևնույն ժամանակին պատկանելը։ Այսպես օրինակ.

1. Քասաղի բազիլիկ տաճարն ու Դվինի Կաթողիկեի սկզբնական շինությունը ներքուստ ունեցել են հաստահեղույս մույթեր, Քասաղում 3 զույգ իսկ Դվինում 6 զույգ, որոնք ձգվելով արևմուտքից դեպի արևելք, իրենց յուրաքանչյուր քևի վրա առաջացրել են հավասարաթռիչք կամարներ, Քասաղում՝ մոտ 3,5 մետր, իսկ Դվինում՝ մոտ 4,5 մետր բացվածքով։

2. Ինչպես Քասաղի տաճարը, այնպես էլ Դվինի Կաթողիկեի սկզբնական շինությունն ավանդատներ չեն ունեցել։ Քասաղում այժմ գոյություն ունեցող հյուսիսային կողքի ավանդատունը տաճարի կառուցումից հետո արված հավելվածքի արդյունք է, Դվինում հս տաճարի արևելյան արսիդի երկու կողքերի ավանդատները սկզբնական շինության վրա հետո արված հավելվածներ են։

Մատենական տեղեկություններից մեզ հայտնի չէ՝ թե Դվինի Կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունը ե՞րբ է եղել, բայց Քասաղի տաճարի հետ միասին նա անշուշտ հանդիսանում է բրիստոնեության շրջանի ամենանախնական հուշարձաններից մեկն իր պարզ և անպաճույճ ձևերով, որի համեմատությամբ Երերույքի Աշտարակի (հավանաբար վերակառուցված) և Եղվարդի նույնատիպ եռաթև տաճարները նույն էպոխայի ավելի զարգացած օրինակներն են, իհարկե կառուցված շատ ավելի ուշ, քան թե Քասաղի և Դվինի եկեղեցիները։

Հարտարապետ Թորամանյանի կարծիքով Տեկորի տաճարն էլ իր սկզբնական շրջանում ունեցել է եռաթև բազիլիկի տեսք, առանց գմբեթի, որի ձևափոխումը կատարված է հասարում 5-րդ դարում, այդ իսկ պատճառով քրիստոնեական եռաթև բազիլիկների սկզբնավորությունը նա դնում է 4-րդ դարում և նրանց համեմատում է հեթանոսական տաճարների հետ և գտնում, որ Տեկորի, Երերույքի, Քասաղի և Մրենի տաճարների սկզբնական շինություններն առանց արևելյան կողմի աբսիդի, եղել են հեթանոսական տաճարներ և քրիստոնեության մուտքի ժամանակ վեր են ածվել եկեղեցիների։ Այդ մասին նա գրել է.—

«Ըստ իս, Տեկորի, Քասաղի տաճարները պարզապես հեթանոսական մեհյաններ են»[1]

Եթե այս տեսակետն առանձին հուշարձանների նկատմամբ սխալ էլ լինի, ընդհանուր առմամբ ճիշտ է, որովհետև վերոհիշյալ տաճարների նախնական տեսքը միանգամայն համընկնում է հեթանոսական մեհյաններին, էլ չասենք, որ մեր հնագույն պատմիչները ևս հաստատում են, որ քրիստոնեության սկզբնական շրջանում հեթանոսական շատ մեհյաններ վերածվեցին եկեղեցիների։

Մեզ թվում է, որ Թորամանյանը սխալվում է, երբ գրում է թե.

«Քասաղի տաճարը, կերևի որ հիմնավորված օրեն ունեցեր է շուրջանակի սյունազարդ ծածկույթ»[2]

Սյունազարդ ծածկույթը թեև հին երևույթ է և գալիս է հեթանոսության բավականին վաղ շրջանից, բայց այստեղ, հենց Քասաղի վրա, նա հավելված է, որ կատարվել է քրիստոնեության վաղ շրջանում։[3]

Այս բոլոր բնությունները ցույց են տալիս, որ Դվինի եկեղեցին էլ, իր ընկերակիցների նման, կարող է հեթանոսական ծագում ունենալ, որովհետև նրա արևելյան աբսիդի մնացորդը ևս, ինչպես ասացինք, չի պատկանում սկզբնական շինության։ Հարցն այն է, որ Դվինի Կաթողիկե եկեղեցու հին աբսիդի քարերը 4-րդ դարում բերել են մի այլ ավելի հին շինության վրայից, այդ պատճառով էլ նրա քարերի վրա երևում են խիստ նախնական որմնանկարների մնացորդներ, որոնք իրար հետ չեն կապվում, որովհետև շարելու ժամանակ քարերը խառնել են։ Այդ որմնանկարներն անշուշտ ունեցել են հեթանոսական բովանդակություն։

---

[1] Թորամանյան, հատ. Ա, էջ 210։ Նույնը նաև էջ 203։

[2] Նույն տեղում, էջ 211։

[3] Հարտարապետ Ա. Սահինյանի վերջին տարիներս Քասաղի բազիլիկ եկեղեցու շուրջը կատարած հնագիտական պեղումները լիովին ապացուցեցին, որ արտաքին սյունասրահը և տաճարի արևելյան աբսիդը հավելվածներ են և չեն պատկանում սկզբնական շինության։

Բացի այդ, Դվինի Կաթողիկեի վերաբերյալ գոյություն ունի նաև ավանդություն այն մասին, որ նա եղել է հեթանոսական մեհյան և հենց դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ հետագայում, 5-րդ դարի կեսերին, Շավասպ Արծրունին և Վնդոն, երբ փորձեցին Հայաստանում վերականգնել հեթանոսական կրոնը, հենց այդ Կաթողիկե եկեղեցիս վերածեցին հեթանոսական մեհյանի։



Դվինի Կաթողիկե եկեղեցին վերակազմություն 1931 թվի պեղումներից հետո

Պատմությունից մեզ հայտնի է, որ մեհյանները եկեղեցի դարձնելը քրիստոնեության մուտքի ժամանակ պատահական երևույթ չի եղել, այլ հեթանոսությունն արմատախիլ անելու մի միջոց, որ գործադրվել է ամենուրեք։ Եթե Գրիգոր Պահլավունին բավարարվեր միայն մեհյանները բանդելով և քրմերի դասը ցրելով, դրանով քրիստոնեություն չէր տարածի, որով-

հետև մեհյանների ավերակներն ու նրանց առանձին քարերը պաշտամունքի առարկաներ կղառնային հեթանոս ժողովրդի համար, ուստի նա, Տրդատ 3-րդի սդնությամբ, ամենուրեք աշխատեց հին կրոնի պաշտամունքը փոխարինել նորով և բրմերին էլ դարձրեց քրիստոնեական եկեղեցու պաշտոնյաներ, որպեսզի ժողովուրդն իր սովորության համաձայն այցելի հին սրբավայրերը՝ այս անգամ իր քրիստոնեական աղոթքն անելու նպատակով։ Այդ հարցում քրիստոնեությունը խիստ զգուշավոր դիրք գրավեց և նույնիսկ պահպանեց հեթանոսական մի շարք տոներ՝ տալով նրանց քրիստոնեական գունավորում։

Ագաթանգեղոսի պատմությունից դիտենք, որ քրիստոնեություն տարածելու ժամանակ Գրիգոր Պահլավունին և Տրդատ թագավորը ոչնչացնում էին բրմերի զորական ուժը, չարդուտում աստվածների արձանները, խլում էին մեհենապատկան թանկարժեք առարկաները և աստվածների արձանների տեղ կանգնեցնում Քրիստոսի սիմվոլը հանդիսացող խաչի նշաններ։ Նրանք միայն Արտաշատ քաղաքի մեհյանն են այրել, իսկ շատ տեղերում պատմագրի բոլորեալ և ավերեալ բառերին հաջորդում է այն, որ նույն տեղում եկեղեցի են հիմնել և «զսպասաւորսն բրմօքն հանդերձ և նոցին դետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»[1]

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն բրմերին եկեղեցու սպասավոր են դարձրել, այլև մեհյանների կալվածքները նույնությամբ հանձնել են եկեղեցիներին։ Նշանակում է, քանդել և ավերել են ոչ թե շենքերը, այլև մեհենական հաստատությունը և նրա տեղ հիմնել եկեղեցի։ Մեզ թվում է, որ դեռևս Խոսրով Կոտակից առաջ էլ Դվինի բերդից դուրս որոշ բնակություն եղել է, երբ քաղաքի կենտրոնական թաղամասը դեռևս ջրի խրամատով անջատված չէր բերդից։

Հավանական է, որ բերդի պաշտպանության ջրային օղակի հարավային հատվածը 1-ին դարում է փորված՝ Կաթողիկե եկեղեցու վերաշինության ժամանակ, իսկ մինչ այդ, բերդը, հավանաբար, ավելի ընդարձակ տարածություն է պարփակել իր մեջ, և ջրի խրամատը գտնվել է այժմյան երևացող տեղից ավելի հարավում։ Այդ բանը պարզ երևում է նրանից, որ կենտրոնական թաղամասի բերդի կողմից սահմանազատող երեք մետր թանձրություն ունեցող պարիսպը, մոտավորապես 25 մետր ավելի հարավից է անցնում և բոլոր նշաններից երևում է, որ այդ պարիսպն իր մեջ ամփոփել է ոչ թե ամբողջ քաղաքը, այլ միայն Կաթողիկե եկեղեցին, միաթեվ բազիլիկ տաճարը և Կաթողիկոսի պալատը։ Այդպիսով այդ պարիսպը հանդիսացել է կաթողիկոսարանի և նրա ենթակայության տակ գտնվող երկու եկեղեցիների շրջափակը։ Բերդապարսպի ետ քաշելն այդ հատվածում՝ կապված է Կաթողիկե եկեղեցու վերաշինության հետ (Սմբատ Բագրատունու ժամանակ), երբ եկեղեցին մոտիկ լինելով բերդին, բերդապահը բողոքում է նրա շինության դեմ և չկարողանալով արգելել, ստիպված է լինում որոշ չափով բերդի պարիսպը ետ քաշել, որպեսզի թշնամին եկեղեցին չկարողանա օգտագործել իբրև ամրություն՝ բերդի դեմ կռվելու ժամանակ։

Դվինի Կաթողիկե եկեղեցին Շավասպ Արծրունու և դվինեցի Վնդոյի ձեռքով մեհյանի վերածվելը կապ ունի նույն տեղը հնում մեհյան լինելու հետ։ Ամենայն հավանականությամբ Շավասպն ու Վնդոն հեթանոսությունը վերականգնելու ձգտումով հին մեհյանը նորից են վերականգնել։[2]

Ըստ Դրասխանակերտցու, Վնդոն հայազգի է, այն էլ ավագագույն նախարարներից մեկը, նա «ի Դվին քաղաքէ» է և Դվինի տերը, ուստի և անարգել կերպով կարողանում է Շավասպ Արծրունու հետ միասին Դվինում վերահաստատել հեթանոսական կրոնը, եկեղեցին ատրուշանի վերածել և իր որդուն էլ տաճարի քրմապետ նշանակել։

Դրասխանակերտցուն կրկնել է Վարդան վարդապետը, իսկ Թոմա Արծրունին Վնդոյին ճանաչում է իբրև պարսիկ մարզպան ու մոդպետ, որի աջակցությամբ Շավասպ Արծրունին քանդում է եկեղեցիները, չարչարում ու սպանում քրիստոնյաներին և Դվինում հաստատում հեթանոսությունը։ Վարդան Մամիկոնյանը հայ նախարարների համագործակցությամբ հարձակվում է հեթանոսների բանակի վրա, ջախջախում է նրանց, սպանում է Շավասպ Արծրունուն և Վնդոյի որդուն այրում ատրուշանի կրակի վրա.

---

[1] Ակադեմիկոս Պատմութիւն Հայոց։ Թիֆլիս 1914, էջ 397։

[2] Եկեղեցին անպատճառ այդ վայրում կառուցելու ձգտումը ես կարծում եմ կապ ունի այն բանի հետ, որ նա հին, դեռևս հեթանոսական շրջանի սրբավայր էր և կառուցողները չեն ուզեցել տեղը փոխել, այլապես անբացատրելի կմնա, թե ինչու այդ ընդարձակ դաշտի վրա բերդին մոտ գտնվող հենց այդ վայրն են ընդունել եկեղեցու համար։

«Եւ բանդեն աւերեն զմեհեանն և յատակեալ զտեղին շինեն նորին բարամբք զմեծ եկեղեցին զսուրբ Գրիգորն ի բյուր տեղւոջն, և փոխեն անդ զկաթողիկոսն հայոց զԴիւտ»։[1]

Այս տեղեկությունները հետաքրքիր են մի քանի տեսակետով։

Նախ՝ տեղեկանում ենք՝ որ հայ նախարարներից ոմանք դեռևս 5-րդ դարի կեսերին ձգտում էին հեթանոսությունը վերահաստատել և նույնիսկ հարմար առիթ գտնելով, որոշ գործնական քայլեր էին անում այդ ուղղությամբ։ Երկրորդ՝ նախարարներից շատերը Մամիկոնյանների գլխավորությամբ դեմ են եղել հեթանոսության, որոնք ներքին պայքար են մղել Արծրունյաց և հեթանոսության ձգտող մյուս նախարարների դեմ։ Այդ պայքարը երբեմն բուռն բնույթ է ստացել բացարձակ պատերազմական գործողություններով։ Երրորդ՝ հայերը, չնայած պարսից իշխանության հովանավորության ու խրախուսանքներին, երբեք չեն հանդուրժել հեթանոսությունը և այդ կրոնն ընդունողներին համարելով ուրացող և դավաճան, ամենախիստ պատիժների են ենթարկել նրանց. դրան հակառակ, Հայաստանում ապրող պարսիկներն ազատ են եղել իրենց հեթանոսական կրոնին հետևելու մեջ, բայց. Նրանք էլ իրենց հերթին, էին կարող քրիստոնեություն ընդունել, և ենթարկվում էին մահվան պատժի։ Մեղ ծանոթ են Յիզտբուզիտի, Դավիթ Դվինեցու, Հովսեփ Դվինեցու, Գրիգոր Մանաճիհր Ռաժիկի սպանության դեպքերը քրիստոնեություն ընդունելու համար։ Այդ պատմությունները վկայում են այն մասին, որ չնայած պարսիկների բացարձակ հալածանքներին, քրիստոնեությունն այնքան ազդեցիկ էր 5-րդ դարում, որ նույնիսկ պարսիկներից ոմանք քրիստոնյա էին մկրտվում։

Ինչ էլ որ լինի, մի բան պարզ է, որ Դվինեցի Վնդոն և Շավասպ Արծրունին մեհյանի այդ տեղն ընտրել էին ոչ թե պատահական կերպով, այլ հին ատրուշանի տեղում, որն այն ժամանակ դեռևս մնացել էր մարդկանց հիշողության մեջ։[2]

Երբ Վահան Մամիկոնյանը Հայաստանի մարզպանության հրովարտակ է ստանում, Դվինի Կաթողիկե եկեղեցու մեջ նրա պատվին հատուկ եկեղեցական արարողություն է կատարվում, որին այնքան մարդ է հավաքվում, որ եկեղեցու հոկայական դահլիճում բոլորը չեն տեղավորվում և հավաքվածների մի մասը եկեղեցու արտաքին սյունազարդ ծածկույթի տակ է պատսպարվում։ Այդ մասին ականատես Ղազար Փարպեցին գրում է.—

«Իսկ տէրն Մամիկոնէից Վահան, զօրավարն հայոց և մարզպան, ընկալեալ զՏրովարտակն մարզպանութեան ի ձեռաց դեսպանին, թէպէտ և զխանտածութիւն հայ մարդկան ճանաչելով ծանրանայր ընդ իրս, այլ սակայն և ոչ ընդդիմանալ հրամանի թագաւորին իշխէր և անհնազանդ լինել։ Առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ ի տունն Աստուծոյ։ Եւ լուեալ զայս մարդկանն որ ի բաղաքին էին, գրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ռամկաց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, այլև հարսունք անգամ յառագաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին զամօթ հարսնութեան՝ դիմեալ ընթանային յեկեղեցին։ Եվ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք Եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակիսն»։

Միանգամայն պարզ է, որ Վահան Մամիկոնյանի մարզպան նշանակվելու ժամանակ 485 թվին Կաթողիկե եկեղեցին արդեն արտաքին սյունազարդ սրահ ուներ, որ կառուցված էր դրանից առաջ։

Բայց ե՞րբ կարող էր կառուցվել եկեղեցու արտաքին սյունասրահը։

Ինչպես ասացինք, արտաքին սյունազարդ սրահը եկեղեցու վրա հավելված է և չի պատկանում ոկզբնական շինության։ Այդ սյունասրահը և եկեղեցու արևելյան կողմի երկու ավանդատները միասին են շինվել արևելյան հնագույն աբսիդի շինությունից հետո և Վահան Մամիկոնյանի մարզպանությունից առաջ։ Այդ կարճ ժամանակամիջոցում կատարվել է միայն մի վերանորոգում 450-ական թվերին, երբ մեհյանը բանդում են և եկեղեցին վերահաստատում՝ Կաթողիկեի տեղում։ Նշանակում է, արտաքին սյունասրահի և արևելյան՝ կիսով չափ տաճարի կորպուսի մեջ մտած ու կիսով չափ դեպի հարավ և հյուսիս դուրս չեղած ավանդատների կառուցման ամենահավանական ժամանակը 450-ական թվականներն են։

---

[1] Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 76—79։

[2] Թ. Թորամանյանը Տեկորի տաճարի ուսումնասիրության մի ծանոթության մեջ նկատի առնելով Թովմա Արծրունու տեղեկությունը Վնդոյի և Շավասպ Արծրունու մասին, գրում է, որ «ակնարկ կա պատմագրաց կողմանե, որ նա (Դվինի Կաթողիկեն) շինված է մեհյանի մը տեղին վրա՝ նույն իսկ մեհյանին քարերով»։ (Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր Ա, 1942, էջ 214)։

Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Տփղիս, 1904, էջ 178։

Մարզպան ձեռնադրվելուց հետո Վահան Մամիկոնյանը վերանորոգում է Դվինի Կաթողիկե եկեղեցին, էջմիածնի տաճարը և ուրիշ շենքեր։ Այդ մասին Վահան Մամիկոնյանի պատմագիր Ղազար Փարպեցին ոչինչ չի գրել։ Այդ մասին մեզ տեղեկություն են տալիս 7-րդ դարի մատենագիր Սեբեոսն ու 10-րդ դարի պատմագիր Դրասխանակերտցին։ Սեբեոսը գրում է.—

«Այս Վահան (Մամիկոնեան) ժողովեաց զհարկս աշխարհին հայոց և շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր պարսից ի Վաղարշապատ քաղաք և ի Ռանի և ի Մղրայս և ի բազում տեղիս աշխարհիս հայոցն։[1]

Իսկ Դրասխանակերտցին Վահան Մամիկոնյանի շինարարական գործունեության մասին անորոշ տեղեկություն է տալիս։ Նա Սեբեոսի հետևությամբ հիշատակում է, որ Վահան Մամիկոնյանը Հայաստանի հարկը հավաքելով՝ թշնամիների քանդած եկեղեցիները շինեց, ստանց հիշատակելու այդ եկեղեցիների անունները։

Մոզայիկ հատակ, բացված Կաթողիկե եկեղեցում

Թե ինչ վիճակումն է եղել Դվինի Կաթողիկեն և Վահան Մամիկոնյանը ինչ նորոգություն է կատարել այնտեղ, մեզ հայտնի չէ։ Այդ պատճառով հետաքրքիր է պարզել, թե նա ի՞նչ բնույթի նորոգություն է կատարել էջմիածնում։ Այդ մասին Ղազար Փարպեցին գրում է՝

«Հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղությամբ զհնացեալ դորձ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն հայոց Մամիկոնեանն Վահանն։[2]

Նշանակում է, նա գրեթե հիմքից քանդել և նոր տաճար է շինել էջմիածնում։ Նույն ձևով է հասկացել Ղազար Փարպեցու տեղեկությունը նաև ճարտ. Թ. Թորամանյանը։ Այդ առթիվ նա գրել է.—

«Հին շենքը ամբողջովին քանդելով՝ հիմն ի վեր վերաշինել է Վահան Մամիկոնյանը 485 թվականին՝ Հայաստանի մարզպան նշանակվելուց հետո։[3]

Նշանակում է, Դվինում էլ Վահան Մամիկոնյանը մեծ աշխատանք պետք է կատարած լիներ, որովհետև եթե այդ նորոգությունները փոքր ծավալ ունենային, այդ դեպքում Սեբեոսը հազիվ թե Վահանի բազմաթիվ շենքերի նորոգություններից միայն այդ մի քանիսը հիշատակեր։ Մյուս կողմից էլ գիտենք, որ շենքի ոճի մեջ Մամիկոնյանը փոփոխություն չմտցրեց, որովհետև նախքան նրա նորոգությունը, Դվինի Կաթողիկեն ուներ արտաքին սյունազարդ սրահ և երեք թև, ուստի և պետք է ենթադրել, որ Վահանի նորոգության ծավալը թեև մեծ է եղել, բայց տաճարի ձևերի մեջ որևէ լական փոփոխություն չի մտցրել նա։

Կաթողիկեի հսկայական շենքը, որ կանգնած էր քաղաքի կենտրոնում, այդ միջոցում հանդիսացել է նրա մեծագույն զարդերից մեկը։

1951 թվականի պեղումների ժամանակ Կաթողիկե եկեղեցու հարավային պատի երկարությամբ բացվեցին եռաթև բազիլիկ տաճարի որմնամույթերի խարիսխներն ու հիմքերը, որոնց դասավորություններից երևում է, որ նրանց թիվը եղել է յոթը։ Դա նշանակում է, որ Կաթողիկեի սկզբնական շինությունը ունեցել է յոթը զույգ մույթ՝ միմյանցից մոտ 4,5 մետր հեռավորության վրա։

Կաթողիկե եկեղեցու սկզբնական շինության հատակը մոտ մի մետրով խորն է եղել ուշ ժամանակի հատակից։ Այդ բանը պարզվեց տաճարի հարավային պատի արևմտյան կողմում բացված որմնամույթի խարսխի շնորհիվ, որ գտնվեց իր բուն տեղում, ուշ ժամանակի հատակից մոտ մի մետր ավելի խորության վրա, իսկ Վահան Մամիկոնյանի նորոգության հետքերը նրանից բարձր են և ունեն որմնամույթի տուֆաքարե տափակ խարիսխ։

1 Սեբեոս, Պատմություն հայոց, էջ 38։
2 Ղազար Փարպեցի, էջ 157։
3 Թորամանյան, Նյութեր... երկրորդ ժողովածու, էջ 61։

Բազիլիկ տաճարի երկրորդ հատակը նշանավոր է այն բանով, որ ծածկված է բնական բարերիզ կազմված խճանկարով, որի հետքերը բացվել էին դեռևս 1938 թվականին, իսկ 1951 թվին այն մեծ ծավալով հայտնաբերվեց եկեղեցու արևմտյան մասում՝ իր բուն տեղում։

Կաթեդրիկ եկեղեցու հարավային պատի մոտ բացված որմնասյան խարիսխ

Դեռևս եկեղեցու կանգուն ժամանակ, երբ նորոգել են եկեղեցին, խճանկար հատակի երեսը ծածկել են կրաշաղախի թանձր շերտով, ուստի և այժմ խիստ դժվար է բաց անել նրա երեսը, որովհետև խճանկարի հատիկները վերին կրաշաղախին ավելի են կպած, քան թե տակի շերտին։

Մոզայիկ հատակը շինելու համար նրա տակ լցրել են մի շերտ քար և այդ շերտի երես-

սին, կրաշաղախի վրա, մեկ բառ. սանտիմետրից ավելի փոքր մակերես ունեցող գույնզգույն խորանարդաձև խճաքարերը դասավորել են գեղեցիկ երկրաչափական ձևերով։

Այս խճանկարը պատկանում է եռաթև բազիլիկ տաճարին, հետևապես նա 5-րդ դարի գործ է և վերաբերում է կամ 450 թվականի և կամ Վահան Մամիկոնյանի 480-ական թվերին կատարած նորոգության։ Այս խճանկարը խիստ ուշագրավ է, որովհետև նա Հայաստանի սակավաթիվ օրինակների մեջ հնագույնն է և ամենից լավ պահպանվածը. մինչև այժմ հայտնի էին միայն Զվարթնոցի 7-րդ դարի խճանկարի բեկորները։

Ի դեպ, պետք է նշել, որ Զվարթնոցի խճանկարի մասին հիշատակություն ունի 10-րդ դարի արաբ մատենագիր Ալ. Մուկադդասին։ Նա գրել է՝

«Դարբիլից (Դվինից) երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակ տաշած բարերից շինած ութը սյուների վրա (հաստած) գմբեթաձև գլխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը...։ Որ դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[1]

Դվինի Կաթողիկե եկեղեցում 1907 թվականին գտնված տիրամոր մոզայիկ պատկերը, որ հայտնաբերվել է 7-րդ դարում շինած արսիդի վրա, մեզ ենթադրել է տալիս, որ այն ժամանակները խիստ հարգված է եղել մոզայիկան և կիրառվել է գլխավոր տաճարների մեջ։

Կաթողիկե տաճարի վերջին հիմնական նորոգությունը պատկանում է Վրկանա Մարզպան Սմբատ Բագրատունուն՝ 7-րդ դարի սկզբին։

Ժամանակակից մատենագիր Սեբեոսը գրում է, որ Սմբատ Բագրատունին ութը տարի Վրկանում մարզպանություն անելուց հետո վերադառնում է պարսից արքունիք, որտեղ նա բազմաթիվ մեծարանքների է արժանանում և հրաման է ստանում գնալ իր ծննդավայրը տնօրության։ Նա պարսից արքայից թույլտվություն է ստանում Դվինի Կաթողիկե եկեղեցին վերանորոգելու և Մովսես կաթողիկոսի փոխարեն հայրապետական աթոռի վրա նոր մարդ դնելու համար։ Այնուհետև Սեբեոսը շարունակում է՝

«Նստուցին զԱբրահամ զՄշտունեաց եպիսկոպոսն յաթոռ հայրապետութեան. ապա սկսան արկանել ճիսն եկեղեցւոյս. ժողովեաց ճարտարապետս քարի, և կացոյց ի վերայ նոցա հաւատարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի հասուցանել ի կատարումն։ Եվ գրեալ գիր ամրաստանութեան բնրդակալին և մարզպանին առ արքայ՝ եթէ «կարի մերձ է առ բերդն, և վնասակար է թշնամւոյ»։

Հրաման հասեալ յարքայէ՝ եթէ «բերդն քակեսցի, և եկեղեցին անդրեն ի նմին տեղւոջն շինեսցիս»[2]

Դրասխանակերտցին այս վերաշինության հանգամանքների մասին պատմում է, որ

«Ինքն (Սմբատ Բագրատունի) արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոփածոյ քարամբք գեղեցկագործ շինուածին՝ կրով ձուլեալ, ի մի, զի յառաջ յաղիւսոյ և ի փայտէ կազմեալ էր նա ի սրբոյն Վարդանայ։ Իսկ պահնակ ամրոցին ամբաստան առ արքայ լինի իբր վնասակար զնա գոլ բերդին. և վաղվաղակի հրաման ընդունի, եթէ բերդդ քակեսցի և եկեղեցիդ ի դմին տեղ շինեսցիս»։

Դրասխանակերտցին այստեղ չափազանցության մեջ է ընկել. նա օգտվել է Սեբեոսի տեղեկություններից և իր կողմից էլ ավելացրել, որ հին եկեղեցին աղյուսաշեն և փայտակերտ է եղել։ Բուն եկեղեցու ավերակները վկայում են, որ նա երբեք աղյուսաշեն չի եղել, իսկ փայտե ծածկն արդեն վաղուց փոխված էր դեռևս եռաթև բազիլիկ տաճարի գոյության ժամանակ։

Որ եռաթև բազիլիկ դրությամբ, հավանաբար 450 թվի վերաշինությունից հետո, Դվինի Կաթողիկե եկեղեցին թաղակապ ծածկ է ունեցել, դրա անհերքելի ապացույցները գտնվեցին հենց տեղում. 1948 թվականին հայտնաբերվեցին տաճարի որմնասյուների քանդակազարդ խոյակների երկու բեկորներ, որոնք իրենց վրա պահել են թաղի կտմարները։ 1950 թվականի պեղումների ժամանակ գտնվեց մի այլ որմնախոյակի բեկոր, դարձյալ նույն նպատակին ծառայող։ Իսկ 1951 թվին եկեղեցու հիմքերի մեջ, իր բուն տեղում գտնվեց մի որմնախարիսխ ամրոցական գրության մեջ, որ մեզ համար ծառայում է ոչ միայն իրրև որմնամույթերի մասին հասկացողություն տվող կարևոր փաստ, այլև հանդիսանում է 4-րդ դարին պատկա-

[1] Ал. Мукаддаси „Ахсану—т—текасим фи марифати—л—акалим", Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Выпуск XXXVIII, Тбилиси, 1908, стр. 16.

[2] Սեբեոս, էջ 101–102։

[3] Դրասխանակերտցի, էջ 71։

նող ճարտարապետական մի կարևոր բեկոր։ Աղյուսաշեն լինելը ևս սխալ է, քանի որ տեղի վրա պահպանվել են տաճարի կրած բոլոր փոփոխությունների հետքերը, բայց բոլորն էլ կոփած քարով են և աղյուսի ոչ մի հետք չի երևում եկեղեցու վրա։

Սմբատ Բագրատունու նորոգության թվականի մոտավոր որոշումը մեծ դժվարություն չի ներկայացնում, որովհետև դեպքերին ժամանակակից Սեբեոսը Սմբատի վերադարձը դեպի Հայաստան դնում է Պարսից Խոսրովի թագավորության 18-րդ տարին, այսինքն 607 թվականին։ Ինչպես գիտենք, Սմբատը վերադառնալով Հայաստան, անմիջապես ձեռնամուխ եղավ Կաթողիկոսի ընտրության և տաճարի վերաշինության, հետևապես Կաթողիկե եկեղեցու ձևափոխման աշխատանքների սկիզբը պետք է համարենք 607 կամ 608 թվականը և եթե՝ նկատի առնելով աշխատանքների հսկայական ծավալը, կառուցման տևողությունը դնենք մոտ 10 տարի, ուրեմն տաճարի նորոգության ավարտումը պետք է համարենք 618—619 թվականի մոտերը։ Մեր այդ ենթադրություններ հաստատվում է նաև այն բանով, որ տաճարի նորոգությունը ավարտվել է Աբրահամ կաթողիկոսի հաջորդ Կոմիտասի կաթողիկոսության առաջին տարիներին, այսինքն 618—619 թվերին։

Գրեթե նույն տարեթվերն են ստացվում նաև 10-րդ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի և ավելի ուշ ժամանակների մատենագիրների տված թվականներով, ուստի և այդ հարցի վրա չենք ծանրանում։

Վրկանի մարդպան Սմբատ Բագրատունու նորոգության ժամանակ Կաթողիկե եկեղեցին կրել է հետևյալ էական փոփոխությունները՝—

1. Վերացրել են տաճարի արտաքին սյունադարդ ծածկույթն ամբողջովին։

2. Տաճարի արևմտյան կողմից երկու դույգ հաստահեղույս մույթերի գլխին դրել են մի մեծ գմբեթ։

3. Տաճարի արևելյան արսիդն ու նրա կողքերին գտնվող երկու ավանդատները բանդել են և արևելակողմյան մույթերին կից շինել են նոր աբսիդ և նրա կողքերին էլ՝ երկու փոքրիկ ավանդատներ, որով եկեղեցու ընդհանուր երկարությունը կրճատվել է մի քանի մետրով։

4. Գմբեթակիր մույթերի հյուսիսային և հարավային կողմերում կառուցել են դուրս չեղած կողմնային աբսիդներ, որով եկեղեցու ուղղանկյուն բառանկյունի հատակաձևը վերածվել խաչաձևի։

5. Տաճարի հատակը բարձրացրել են մոտ 20 սմ. և մողայիկի փոխարեն ծածկել են սալ քարերով։

Պարզ է, որ եկեղեցու աբսիդի տեղափոխությունը կապված է եղել գմբեթի շինության հետ։ Հարցն այն է, որ երբ արևմտյան չորս մույթերի վրա գմբեթ կառուցվեց, արևելյան աբսիդը խիստ հեռու էր մնում տաճարի կենտրոնից և դրանով հատակաձևի խաչաձևության մեջ անկանոնություն էր առաջ գալիս։ Ուստի, որպեսզի գմբեթը և կողմնային աբսիդները արևելյան աբսիդից շատ հեռու չլինեն, արևելյան աբսիդը մոտեցրել են գմբեթին։

Այս փոփոխություններից հետո եռաթև բազիլիկ տաճարը դարձավ կողմնային աբսիդներ ունեցող մեծ եկեղեցի, որի գմբեթը նստած էր եկեղեցական դահլիճի կենտրոնում բարձրացող չորս հսկայական սյուների վրա։

Դվինի եկեղեցու այս ձևափոխությունը եզակի կամ պատահական երևույթ չէ հայկական ճարտարապետության համար։ Այս նույն բախտն է վիճակված եղել նաև մի քանի այլ հնագույն եկեղեցիների։ Օրինակ՝ Էջմիածնի տաճարը և Տեկորի հնագույն եկեղեցին նախապես եղել են եռաթև շենքեր, առանց գմբեթի, որոնք հետագայում, սկսած 5-րդ դարից, ձևափոխությունների են ենթարկվել և դարձել չորս հաստահեղույս սյուների վրա գմբեթ կրող շենքեր։ Նշանակում է, ժամանակի ոգին է պահանջել խաչաձև հատակագծով գմբեթավոր եկեղեցի ունենալը և այդ տենդենցն իր արտահայտությունն է գտել Ագաթանգեղոսի պատմության մեջ Լուսավորչի տեսիլքին վերաբերող հատվածում, որտեղ, ինչպես ճիշտ է նկատել Թ. Թորամանյանը, չորս սյուների վրա հանգստացող գմբեթն է հանդես գալիս խաչաձև հատակաձևի կենտրոնում. նա արտահայտում է քրիստոնեության սիմվոլը հանդիսացող խաչը։

Այնուհետև Կաթողիկե եկեղեցին իբրև մայր տաճար իր դերությունը շարունակեց մինչև

1949 թվականի պեղումների ժամանակ կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում դուրս եկան հարդաքաոն հում աղյուսների բեկորներ, ճիշտ այնպիսիք, ինչպիսիք դրանցվել են Կարմիր Բլուրում և Վրաստանում՝ Արմազիի պեղումների վայրում։

Դվինի այդ աղյուսները պատկանում են տաճարի տարածության տակ գտնվող Ուրարտական բնակավայրին և ոչ մի կապ չունեն եկեղեցու հետ։

893 թվականը, երբ մեծ երկրաշարժի ժամանակ վերջնականապես կործանվեց և դրանով էլ Դվինը դադարեց կաթողիկոսի ռեզիդենցիա լինելուց, որովհետև այդ երկրաշարժից անմիջապես հետո կաթողիկոսն իր աթոռը փոխադրեց այլ տեղեր։

Այնուհետև Դվինի այդ հսկայական շենքը ավերակ վիճակում մնաց մինչև քաղաքի վերջնական անկումը։

Այսպիսով հանգում ենք հետևյալ եզրակացություններին։

1. Դվինի Կաթողիկե եկեղեցին հավանաբար սկզբնապես կառուցված է եղել իբրև հեթանոսական մեհյան, որը քրիստոնեության մուտքի ժամանակ վեր է ածվել եկեղեցու։

2. Սկզբնական տաճարն ունեցել է հսկայական մեծություն և փայտե ծածկ, բայց 5-րդ

Կաթողիկե եկեղեցու հյուսիսային աբսիդի հիմքերը, որտեղ երևում է աբսիդի ուշ ժամանակում կառուցված լինելը

դարի կեսերին վերափոխվել է քաղաքածկի և այդ ժամանակ տաճարի եռաթև բազիլիկ դահլիճի կողքերին ավելացել է արտաքին սյունազարդ սրահ։

3. Վահան Մամիկոնյանի մարզպանության սկզբներին (485 թվին) տաճարը մեծ վերանորոգման է ենթարկվել, բայց ձևերի մեջ որևէ էական փոփոխություն չի կրել։

4—7-րդ դարի սկզբներին (607—618 թթ.) Կաթողիկե եկեղեցին դարձյալ հիմնական վերանորոգման է ենթարկվել Սմբատ Բագրատունու հրամանով, բայց այս անգամ նա կրել է խոշոր փոփոխություններ։ Իր երկարությունից կորցրել է մոտ 9 մետր, կարճանալու պատճառով արևելյան աբսիդը քանդվել է և նրա փոխարեն նոր աբսիդ է շինվել։ Այդ ժամանակ եկեղեցու 4 հաստահեղույս պիլոնների վրա դրվել է մի մեծ գմբեթ և տաճարի արտաքին սյունասրահը քանդվելով, կառուցվել են հարավային և հյուսիսային կողմնային աբսիդներ։

Այդ բոլոր փոփոխությունների հետևանքով եկեղեցին եռաթև բազիլիկից վեր է ածվել խաչաձև հատակ ունեցող գմբեթավոր տաճարի։

5. Կաթողիկե եկեղեցու 1951 թվականի պեղումները բաց արին 4-րդ դարին պատկանող մի որմնասյան բազա և 5-րդ դարի կեսերին վերաբերող մոզայիկ հատակ, որոնք հայ ժողովրդի արվեստի հնադույն շրջանի պատմության համար ունեն բացառիկ նշանակություն։

6. Կաթողիկե եկեղեցին վերջնականապես ավերվել է 893 թվի մեծ երկրաշարժի ժամանակ։



Կաթողիկեի վերակազմություն

К. Кафадарян

Двинский кафедральный собор

Резюме

Систематические археологические раскопки в Двине обнаружили остатки ряда крупных архитектурных сооружений, изучение которых весьма важно для истории армянской архитектуры. В этом отношении представляет большой интерес

уже известный науке Двинский кафедральный собор, данные о внешнем облике и изменениях которого выявлены раскопками 1946—1951 гг.

Новые археологические данные дают возможность судить о первоначальном виде и характере дальнейших изменений армянских трехнефных базиличных церквей, о времени происхождения различных пристроек (внешняя колоннада, приделы, боковые абсиды), что способствует освещению ряда вопросов, связанных с развитием средневековой армянской архитектуры.

Двинский кафедральный собор, по всей вероятности, построен как языческий храм, который в дальнейшем был преобразован в христианскую церковь.

Первоначально храм имел громадные размеры и деревянное перекрытие. В середине V века деревянное перекрытие было заменено сводным перекрытием, а вокруг трехнефного зала была сооружена внешняя колоннада.

В начале марзпанства Вагана Мамиконяна (485 г.) храм был основательно отремонтирован, но его внешний вид не подвергся каким-либо существенным изменениям.

В начале VII века (607—608 гг.) кафедральный собор, по велению Смбата Багратуни, вновь был основательно реконструирован и на этот раз подвергся большим изменениям. Здание потеряло в длине 9 метров. В результате была снесена восточная абсида и построена новая. В это же время на четырех пилонах был поставлен купол и взамен снесенной внешней колоннады построены восточная и северная боковые абсиды.

В результате всех этих изменений церковь из трехнефной базилики превратилась в купольный храм с крестообразным основанием.

Раскопки кафедрального собора в 1951 г. обнаружили базу пилястра, относящуюся к середине IV века, и мозаичный пол, относящийся к V веку, нахождение которых имеет исключительное значение для изучения истории древнейшего периода искусства армянского народа.

Кафедральный собор был полностью разрушен во время большого землетрясения 893 года.